# ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱՆԱՆ

# ՊԱՏՄՈՒԹԻՒՆ Ս. ԵՐՈՒՍԱՂԷՄԻ

## ԳԼՈՒԽ Ա.

Մեկիլ Շղթայակրի 'ի Կոստանդինուպօլսոյ. Ժամանել Նորա 'ի Բերիա և անտի յԵրուսաղէմ։ Բարեկարգութիւն Ս. Յակոբայ։ Ոչխարաւորք Յոպոփէյու։ Կարապետ Կաթուղիկոս։ Կանոնք Ս. Յակոբայ։

ԻՍԿ Գրիգոր և Յովհաննէս Պատրիարքունք աջակցեալ ընդ միմեանս՝ մեծավաստակ Ջանիւք՝ ժողովեցին բազում ինչ յազգէն Հայոց, և վճարեցին ըստ մասին ըստ արտսն, և գնեցին 'ի Յոպպէ ղերիս մթերանոցս, և ըստ սենեկան 'ի վերայ նոցա և խառնեցին 'ի վանս եւ յանդիման սոցին զփուռն հացի 'ի Ծովեզրն՝ զոր յետոյ յաւիրշտակեցին այլազգիք։

Եւ ինքն Գրիգոր ետես զհաչիւն իւր ընդ Յովհաննու Պատրիարքի, սկսեալ 'ի թուականէն 1717, յոր եմուտ 'ի գործ ծառայութեան Ս. Աթոռոյն, և մաքրեաց զամենայն տուր և առ գործս իւր. և ապա գնացեալ երկոքեան 'ի դատարան Մահմուտ Փաշայի՝ ետուն հաստատել զայն դատաւորին, եւ ինքն Գրիգոր ետ նմա գիր անդորրութեան։

Եւ յետ այնորիկ կարգեաց զնոյն ինքն զՅովհաննէս Պատրիարք Փոխանորդ Աթոռոյն Երուսաղէմի՝ հաճութեամբ ազգային երեւելեաց. և նա յօժարութեամբ յանձն առ աշխատիլ անձանձիր յօգուտ եւ 'ի շինութիւն Ս. Աթոռոյն եւ ամ ըստ ամէ առաքէր յԵրուսաղէմ զտուրար հաչուի իւրոյ։